Հ. Գ. ԲԱՏԻԿՅԱՆ

(ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի նախագահության նախագահի տեղակալ)

ՍՍՌՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼԸ

Հայաստանում Սովետական իշխանության հաստատման 20-րդ տարեդարձը նորանոր հաղթանակներ է բերում կուլտուրայի, գիտության, արվեստի բնագավառում։

Ռեսպուբլիկայում հատկապես մեծ են նվաճումները գիտական մտքի զարգացման, գիտական-զեկավար և գիտական-որակյալ կադրերի աճման բնագավառում։

Այսպիսի պայմաններում բացառիկ նշանակություն է ստանում ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի գործունեությունը։ Այդ հաստատությունը Հոկտեմբերյան ռեվոլյուցիայի զավակն է։ Հինգ տարի է մեզ բաժանում այն ժամանակից, երբ կառավարության որոշմամբ Հայաստանում առաջին անգամ հիմնվեց ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալը։ Սկզբում ընդամենը 15—20 գիտական աշխատողներ ունեցող այդ փոքրիկ հաստատությունը հինգ տարվա ընթացքում աճել է դառնալով մի հսկայական սոլիդ հաստատություն՝ 190 գիտական աշխատողներով, և դա ռեսպուբլիկական զեկավար օրգանների ու ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի նախագահության ամենօրյա ուշադրության և աջակցության շնորհիվ։

Հիշենք, որ դեռ հինգ տարի սրանից առաջ Գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի սիստեմում կար ընդամենը չորս հաստատություն, իսկ ներկայումս նա իր մեջ միավորում է ավելի քան 14 հաստատություն, այդ թվում 6 խոշոր ինստիտուտ, ինչպիսիք են՝ Բիոլոգիական, Գեոլոգիական, Քիմիական, Պատմության և նյութական կուլտուրայի, Գրականության և լեզվի, Բուսաբանական, և 8 բաժիններ ու սեկտորներ, ինչպիսիք են՝ Հողագիտական սեկտորը, Սևանի հիդրոբիոլոգիական կայանը, Աստղաֆիզիկական, Հակասեյսմիկ բյուրոն, Սեյսմիկ ցանցը, Կիրովականի բուսաբանական այգին և այլն։

Հիշենք նաև, որ սկզբում մշակվում էր ընդամենը 6—7 պրոբլեմ, իսկ ներկայումս Արմֆանի թեմատիկան արտացոլում է մեր երկրի արտադրողական ուժերի զարգացման հիմնական մոմենտներն ու ռեսպուբլիկայի կուլտուրական շինարարության հարցերը, պարունակելով իր մեջ 30 պրոբլեմ՝ 145 առանձին գիտա-հետազոտական թեմաներով։

Հետաքրքիր հայացք գցելով այն ուղու վրա, որ քան տարվա ընթացքում անցել է սովետական գիտությունը Հայաստանում և մասնավորապես այն ուղու, որ անցել է Գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալն իր կազմիմիայի հայկական ֆիլիալն իր գոյության հինգ տարվա ընթացքում, անհրաժեշտ է նշել, որ այստեղ ևս, չնայած բոլոր դժվարություններին, մենք ունենք հսկայական հաջողություններ։

Արմֆանի առանձին ինստիտուտների կողմից մշակվող հիմնական պրոբլեմների թվում կարելի է հատկապես ընդգծել հողի արտադրողականության և գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացման թեորիայի ու մեթոդների մշակումը, երկրի օգտակար հանածոների ուսումնասիրումն ու հայտնաբերումը, երկրի կենդանական և բուսական ռեսուրսների ինվենտարիզացիան, գյուղատնտեսության վնասատուների դեմ պայքարելու պրոբլեմը, Սևան-Զանգուի կասկադի պրոբլեմը (Սևանա լճի, Զանգու գետի և Արարատյան հովտի աղբյուրների ջրային ռեսուրսների օգտագործման գլխավոր սխեմայի հիմնավորումը), կանաչաղարդման պրոբլեմը (մշտադալար ու դեկորատիվ բույսերի նոր տեսակների ռեպրոդուկցիան), բուսական օրգանիզմների զարգացումը ղեկավարելու, մեկ վեգետացիոն սեզոնում երկու բերք ստանալու, անօգտագործելի հողերի յուրացման (աղաջրած հողերի յուրացումը, պայքար հողի էրոզիայի դեմ և այլն), մետաղին փոխարինող նյութերի հայտնաբերման, գյուղատնտեսության և արդյունաբերության մնացուկների ուտիլիզացիայի պրոբլեմը (ացետիլենի ուսումնասիրությունն արդյունաբերության համար նոր, արժեքավոր հումքի սինթեզի նպատակով, ացետիլ-ցելյուլոզիայի ստանալը տեղական հումքից՝ լինտերից), վիտամինոլոգիայի պրոբլեմը, երկնային մարմինների և մասնավորապես արևի ակտիվ գործունեության ուսումնասիրման պրոբլեմը։

Հումանիտար գիտությունների գծով՝ հայ գրականության իսկական մարքսիստական պատմություն ստեղծելու, ժողովրդական ստեղծագործության ուսումնասիրման և գիտական լուսաբանման, հայ գրականության կլասիկների գրական ժառանգության ուսումնասիրման և մարքս-լենինյան վերաբերմունքի, լեզվաշինարարության պրոբլեմները։

Պատմության և արխեոլոգիայի գծով՝ հայ ժողովրդի իսկական պատմության ուսումնասիրությունն ու ստեղծումն արդեն ժամանակաշրջանից մինչև մեր օրերը, հայկական կուլտուրայի նյութական հուշարձանների ուսումնասիրությունը, որոնք լույս են սփռում պատմական փաստերի և իրադարձությունների վրա, հայ ժողովրդի կուլտուրայի գենեզիսի և էվոլյուցիայի ուսումնասիրությունը, պատմական գիտության մշակումն ու խորացումը՝ նյութական հուշարձանների մարքսիստական - մատերիալիստական անալիզի և անցյալի գրական աղբյուրների քննադատաբար յուրացման հիման վրա, անցյալի արժեքավոր ձեռագիր-հուշարձանների սիստեմատիզացիան և ժողովածուների հրատարակումը։

Միայն վերջին երկու տարվա ընթացքում Արմֆանը մշակել և սոցիալիստական տնտեսության մեջ արմատավորել է 14-ից ավելի ավարտված թեմաներ, որոնք ունեն առաջնակարգ գիտական նշանակություն (կարտոֆել, ներսորտային խաչաձևում, բամբակենու ծերատուներ, ներբատուներ, կավերը որպես փոխարիներներ և այլն)։

Սակայն մեզ մոտ աշխատանքը դեռևս շատ թույլ է կազմակերպված քիմիայի և գեոլոգիայի բնագավառում։ Մեր ռեսպուբլիկայի արտադրողական ուժերի զարգացումը պահանջում է հատուկ ուշադրություն նվիրել թեմատիկայի ուժեղացմանն օգտակար հանածոների, թանկարժեք մետաղների ուսումնասիրման բնագավառում, որոնցով հատկապես հարուստ է մեր երկիրը, ծավալել ացետիլենի, սինթետիկ կաուչուկի հետ կապված հարցերի ուսումնասիրությունը և այլն։

Զգալիորեն փոխվել է Արմֆանի գիտական անձնակազմը։ Ներկայումս Արմֆանում աշխատում են երկու ակադեմիկ, ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի մեկ անդամ— թղթակից, 17 դոկտոր-պրոֆեսոր և գիտությունների ավելի քան 45 թեկնածու։ Հենց միայն վերջին մեկ տարվա ընթացքում գիտությունների թեկնածուի աստիճանի դիսերտացիա պաշտպանել են 12 մարդ և գիտությունների դոկտորի աստիճանի դիսերտացիա՝ մեկ մարդ։ Դիսերտացիաների պաշտպանության պատրաստվող երկու աշխատակիցներ արժանացել են բարձր պատվի— Ստալինի անվան թոշակի։

Այս տարի նոր ընդունելությունն կատարվեց Արմֆանի ասպիրանտուրայում։ Ներկայումս մեր սիստեմում կա մոտ 40 ասպիրանտ։

Արմֆանի բալանսի մեջ այս տարի մեծ տեղ է գրավում Բուսաբանական այգու բացումը։ Դա իրոք որ մի խոշոր իրադարձություն է։

Արմֆանի կյանքում ու, թերևս, մեր ժողովրդի պատմության մեջ մեծ իրադարձություն է հանդիսանում օրերս անցկացված գիտական հոբելյանական սեսսիան։ Միությունի 12 խոշոր գիտնականների, այդ թվում 8 ակադեմիկների մասնակցությամբ մեր սեսսիայի աշխատանքին, իրոք մի խոշոր իրադարձություն է։ Սեսսիան է՝ ավելի բարձրացրեց Արմֆանի հեղինակությունը և աշխատավորության լայն խավերին կապեց ռեսպուբլիկայի գիտական կենտրոնի հետ։

Կատարելով պատվավոր խնդիր, Արմֆանն ուսումնասիրում և լայն մասսաների սեփականությունն է դարձնում հայ ժողովրդի կլասիկների՝ Աբովյանի, Թումանյանի, Նալբանդյանի, Պռոշյանի, Ալշանյանի, Փափազյանի և ուրիշների գրական ժառանգությունը։

Այս տարին հանդիսանում է գիտական նվաճումները մեր ռեսպուբլիկայի մասսաներին է՛լ ավելի մոտեցնելու տարին։ Բավական է միայն հիշել, թե ինչպիսի հսկայական հաջողություն են վայելում մեր լեկտորիումները։ Միայն այս սեզոնում մենք անց ենք կացրել ավելի քան 15 դասախոսություն։ Հատկապես հետաքրքիր էին պրոֆ. Աբեղյանի դասախոսությունը, պրոֆ. Մալխասյանի դասախոսությունը՝ «Հին գերդաստանի պատմության մասին», պրոֆ. Մելիքսեթ-Բեկի, արվեստի վաստակավոր գործիչ Գ. Լևոնյանի և ուրիշների դասախոսությունները։

Մեծ իրադարձություն է նաև Լենինական քաղաքում անցկացված առաջին գիտական սեսսիան։ Լենինական քաղաքի աշխատավորության լայն խավերը բացառիկ հետաքրքրություն և ուշադրություն ցուցաբերեցին դեպի մեր սեսսիայի աշխատանքը։

Դեկտեմբերի սկզբին նախատեսվում է Լենինական քաղաքում անցկացնել այդպիսի երկրորդ գիտական սեսսիան։

Մենք մեծ նվաճումներ ունենք մեր գիտական աշխատությունների հրատարակման բնագավառում։ Հինգ տարվա ընթացքում հրատարակված են ավելի քան 65 անուն գիրք։ Դրանց թվում մենք ունենք մի շարք լուսավոր արժեքավոր աշխատություններ։ Միայն այս տարվա ընթացքում հրատարակվել է ավելի քան 42 անուն գիրք, այդ թվում՝ «Գրական ժառանգություն»-ը, Ա. Աբովյանի «Երկեր»-ը, «Հին հայ իրավունքի պատմություն»-ը, Արմֆանի «Տեղեկագիր» 1, 2, 3, 4, 5 համարները, քառասունյակին նվիրված հոբելյանական ժողովածուներ, Հ. Թումանյանի երկերի ակադեմիական հրատարակությունը, ինարդինիկական շարժումն Անդրկովկասում և այլն։ Ռուսերեն լեզվով տպագրության է պատրաստվում ակադեմիկ Մանանդյանի «Տիգրան Բ. և Հռոմը» աշխատությունը։

Սրանք են սովետական առաջավոր գիտության զարգացման բնագավառում Լենին-Ստալինի մեծ պաշտպանի դեկավարությամբ Արմֆանի ձեռք բերած հաղթանակների հակիրճ, բնավ ոչ լրիվ հանրագումարները։

Սակայն մեր առջևում դեռ կան լուծելու ոչ-քիչ թվով կարևոր պրոբլեմներ, որոնք պետք է պրակտիկ կերպով կապակցվեն սոցիալիստական ժողովրդական տնտեսության պահանջների հետ (գեոլոգիա, քիմիա և այլն)։

Մեր ինտելիգենցիան ցույց է տալիս հերոսական աշխատանքի օրինակներ։ Գիտական հասարակայնությունը կազմվածի է՛լ ավելի մեծ եռանդ, իր բոլոր ուժերն ու գիտելիքները կնվիրի մեր ռեսպուբլիկայի ամենահսկայական բնական հարստությունների հայտնաբերման գործին և դրանով իսկ կբարձրացնի հայ ժողովրդի՝ ձևով ազգային և բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան։